մասնակիցները իրենց պատկերացրել են փոքր հասկում: Տեղի է ունեցել Բռնության տեսակների ներկայացում, քննարկվել են բռնության փոխարեն կիրառվող այլընտրանքային տարբերակներ, տեղի է ունեցել իրավիճակների ներկայացում և քննարկում տարբեր տեսանկյուններից: Ծնողներին ներկյացվել է պաշտպանական վարքագծի գործընկերությունները, առանձնակի շեշտադրվել է կիբեռհափշտակիչների կողմից իրականացվող բռնության դեպքերը, քննարկվել են թե ինչպես է մեր մարմինը տեղեկացնում մեզ, որ ինչ-որ բան այն չի, ներկայացվել են ծնողի կողմից երեխաների բռնությանը արձագանքման փուլերը, քննարկվել են բռնության իրական դեպքեր և ներկայացվել են բողոքարկման մեխանիզմները:

Հանդիպման արդյունքում մանսնակիցները տարբերակում են բռնության տեսակները և իրազեկ են Հայկական Կարիտասի պաշտպանության քաղաքականությանը և բողոքարկման մեխանիզմներին:

- <u>Իրազեկող խմբային աշխատանք ծրագրի շահառու երեխաների ակտիվ մասնակցությամբ:</u> Գավառի <<Փոքրիկ Իշխան>> կենտրոնի կողմից իրականացվող <<Ոչ բռնությանը>> միջազգային օրվան նվիրված իրազեկող և կանխարգելիչ արշավի շրջանակներում նկարահանվել է իրազեկող տեսանյութ՝ կենտրոնի սաների մասնակցությամբ: Ծևագրի շահառուները իրազեկվել են, այն մասին որ 2007 թվականի հունիսի 15-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան հաստատել է հոկտեմբերի 2-ը որպես «Ոչ բռնությանը» միջազգային օր: Տեսանյութը լուսաբանվել և տարածվել է կազմակերպության սոցիալական ցանցերի միջոցով: Կենտրոնի սաները նաև Արտ-թերամիայի միջոցով պատրաստել են պաստառներ <<Ոչ բռնությանը>> կոչերով:

- <u>Ամփոփիչ իրազեկող հանդիպում ծրագրի շահառու ծնողների, կենտրոնի բազմամասնագիտական թիմի և համագործակից կառույցների համատեղ մասնակցությամբ:</u> Ս/թ հոկտեմբերի 2-ին Գավառի <<Փոքրիկ Իշխան>> ցերեկային խնամքի սոցիալական կենտրոնի կողմից իրականացվում է <<Ոչ բռնությանը>> միջազգային օրվան նվիրված իրազեկող և կանխարգելիչ հանդիպումներ, միջոցառումների շրջանակներում կենտրոնում իրականացվեց ամփոփիչ թեմատիկ հանդիպում <<Ոչ բռնությանը>> խորագրով: Միջոցառմանը մասնակից կառույցներին ուղարկվել են պաշտոնական հրավերներ: Հանդիպմանը հրավիրած էին համագործակից կառույցների ներկայացուցիչներ, ովքեր իրենց մասնագիտական փորձով և դիտարկումներով կիսվեցին ծրագրի **10** շահառու ծնողների հետ: Հանդիպմանը հրավիրած համագործակից կառույցների ներկայացուցիչները ներկայացրեցին իրենց մասնագիտական փորձը և դիտարկումները թեմայի վերաբերյալ, շահառու ծնողներին ներկայացրեցին իրենց կոնտակտային տվյալները, օրենսրդական ակտերը: Հանդիպմանը մասկացություն ունեցան մասնագետներ հետևյալ համագործակից կառույցներից՝
  - ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի Գեղարքունիքի մարզային ստորաբաժանում
  - Կանանց աջակցման կենտրոն
  - Գավառի Հոգեկան առողջության կենտրոն (ՀԱԿ)
  - Գավառ քաղաքի Պ. Ղանդիլյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոց
  - Գավառ քաղաքի №5 հիմնական դպրոց
  - Գավառի Մ.Բունիաթյանի №8 միջն. Դպրոց